



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 17 » հունվարի 2024թ.
ք. Արմավիր

N ՄՈ/25-Ա

«ՄԵԾԱՄՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի հունվարի 12-ի N ՄՈ/13-Ա և N ՄՈ/14-Ա որոշումները, «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

- Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
- Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Անի Միրզախանյանին (համաձայնությամբ):
- Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



ՄԱՐԶՊԵՏ՝

2024-01-17 15:11:30 GMT+4
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից



Գ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2024 թվականի 17. Դեկտեմբերի

N ՄՈ/25 -Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Գևորգյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
ավագ մասնագետ

Անդամներ՝

Ն.Ալավերդյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
ավագ մասնագետ

Զ. Եղոյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Գասպար Եղիազարյան -

«Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական
ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Թամարա Բալայան -

«Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական
ոչ առևտրային կազմակերպության տնօրենի
պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

